ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԾՁԲ -3/1-1

ք. Երևան 06.05.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Սիգռամ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ն. Աբրահամյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 10.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **8** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՀՈՒ ԱՀՏԱ վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Սիգռամ» ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Նորապատ
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն	<Արարատբանկ> ՓԲԸ,
Հ/հ 900011144079	Հ/Հ 1510002022500100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 01541608
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ն. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1
N ՇՀԾԶԲ-3/1-1 պայմանագրի ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան /ապրանքների, ծառայությունների և աշխատանքների անվանումները/	Չափման միավորը	Քանակը	2017թ. գնման ժամանակացույցը ըստ եռամսյակների /քանակը/			Միավորի գինը /ՀՀ դրամ/	Առավելագույն Գումարը /ՀՀ դրամ/
				2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 30.11.2017թ.		
1	**Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ այդ թվում**	**դրամ**	**1**					2000000
	Միավորի գներ							
	1, Ալեհավաքի ընդունիչի վերանորոգման աշխատանքներ	հատ		Նախատեսվում է իրականացնել 2017թ.-ի ընթացքում՝ համաձայն ներկայացված հայտերի			10,000	
	2, Ալեհավաքի ուժեղացուցիչի վերանորոգման աշխատանքներ						10,000	
	3, Հեռուստացույցի հեռակառավարման վահանակների վերանորոգում կամ փոխարինում նորով						2,000	
	4, Հեռուստացույցի կորպուսի վերանորոգման աշխատանքներ						5,000	
	5, Հեռուստացույցի սնուցման բլոկի վերանորոգում						80,000	
	6, Հեռուստացույցի պրոցեսորի վերանորոգում կամ փոխարինում նորով						20,000	
	7, Հեռուստացույցի միկրոսխեմաների վերանորոգում կամ փոխարինում նորով						20,000	
	8, Հեռուստացույցի պլատայի վերանորոգում կամ փոխարինում նորով						10,000	
	9, ԴՎԴ նվագարկիչի սնուցման բլոկի վերանորոգում						5,000	
	10, ԴՎԴ նվագարկիչի լազերային գլխիկի վերանորոգում կամ փոխարինում նորով						5,000	
	11, Երաժշտական կենտրոնի լազերային գլխիկի վերանորոգում կամ փոխարինում նորով						10,000	
	12, Տեսապրոեկտորի լամպի վերանորոգում						30,000	
	13, Տեսապրոեկտորի սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով						10,000	
	14, Ձայնային սարքավորման ուժեղարարի, դիֆուզորի վերանորոգման և կարգաբերման աշխատանքներ						10,000	
	15, Աուդիոմագնիտոֆոնի սնուցման բլոկի վերանորոգման աշխատանքներ						5,000	

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.	«Էլեկտրասարքավորանքի ընթացիկ նորոգում և պահպանում»՝ այդ թվում.
	Առկա անսարք դաստիարակչական տեխնիկական միջոցների ախտորոշում, վերանորոգման աշխատանքների կազմակերպում, անսարքության վերացում /պատվիրատուի հայտերի համաձայն՝ տարվա ընթացքում/, համապատասխան դետալների, աքսեսուարների և սարքերի ապահովում՝ այդ թվում. հեռուստացույց, երաժշտական կենտրոն, ԴՎԴ նվագարկիչ, տեսապրոեկտոր, ձայնային սարքավորում, ուժեղացուցիչ, ռադիոընդունիչ, աուդիոմագնիտոֆոն, արբանյակային ալեհավաք , բարձրախոսներ և այլն՝ պատվիրատուի հայտերի համաձայն 2017 թ. (տարվա) ընթացքում:

	Անսարք տեխնիկական միջոցների տեղափոխումը արհեստանոց /Պատվիրատուի կողմից ք.Երևանում նշված հասցե/ իրականացվելու է զորամասերի ուժերով՝ պատասխանատու ստորաբաժանման միջոցով:
	1. Ալեհավաքի ընդունիչի վերանորոգում
	2. Ալեհավաքի ուժեղացուցիչի վերանորոգում
	3. Հեռատացույցի հեռակառավարման վահանակների վերանորոգում կամ փոխարինում նորով
	4. Հեռատացույցի կորպուսի վերանորոգման աշխատանքներ
	5. Հեռատացույցի պրոցեսորի վերանորոգում կամ փոխարինում նորով
	6. Հեռատացույցի սնուցման բլոկի վերանորոգում
	7. Սիկրոսխեմաների վերանորոգում, տեղադրում կամ փոխարինում նորով
	8. Հեռատացույցի պատյայի վերանորոգում
	9. ԴՎԴ- նվագարկիչի սնուցման բլոկի վերանորոգում
	10. ԴՎԴ- նվագարկիչի լազերային գլխիկի վերանորոգում, տեղադրում կամ փոխարինում նորով
	11. Երաժշտական կենտրոնի լազերային գլխիկ և վերանորոգման աշխատանք
	12. Տեսապրոեկտորի լամպի փոխարինում նորով
	13. Տեսապրոեկտորի սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով
	14. Ձայնային սարքավորման ուժեղարարի, դիֆուզորի վերանորոգման և կարգաբերման աշխատանքներ
	15. Աուդիոմագնիտոֆոնի սնուցման բլոկի և ուժեղարարի վերանորոգում

«Ընթացիկ նորոգում և պահպանման աշխատանքներ» ծառայության սարքերի և սարքավորումների մոդելները (մակնիշները):

1. Արբանյակային ալեհավաք՝«STARGOLD», «H0071570», ալեհավաքի ընդունիչ «01P10 Sat»
2. Արբանյակային ալեհավաք՝«STARGOLD», «H0071570», ալեհավաքի ուժեղացուցիչ
3. Հեռատացույց՝ «LCD-TOSIBA», «LCD-PANASONIK»,«LCD-SAMSUNG», «LED-TOYOTO» «DAEWOO», «PHILIPS», «ORVIKA», «AKIRA ST-21N19A», «Prizma-2180K», «KWT», «KT», «ORSON», «DAEWOO- CHA 100542», «TOSHIBA», «JVC», «FORY» AC212MT3»,«MONEQS»,«LG», «SONY»,«KORFUG»,«SHIVAKI»,«MONEX»,«PRIMA», «CHANZ», «MATERIN»,«LOMEX» և այլն
4.DVD նվագարկիչ՝ «PHILIPS-310K», «PANASONIK», «COENCO», «GEPAS»,«TOSHIBA» և այլն
5.Տեսապրոեկտոր՝ «Ինֆոկուս-S/N AMMC42302497», «TOSHIBA», «SANYO PLC-XW200», «SONY»,«SAYONA», «BENQ» և այլն
6.Ձայնային սարքավորում՝ «INTER-M», «LIMAR», Պրոցեսոր-Y74111G11600291, ձայնամփյուռ «25ԱԱ-109 35ՎՏ» «15ԿՁ-1», «JBL-հաճախականությամբ դինամիկ», «Ուժեղացուցիչ –ԻՆՏԵՌ-Մ», «Բարձրախոս INFINITI» և այլն
7. Մոնիտոր՝ «LG-47 MEZ61921106» և այլն
8.Երաժշտական կենտրոն՝ «PHILIPS», «VCD 6323R» և այլն
9.Ռադիոհանգույց՝ «SHOW SA-814G ECHO», «INTER-M MFC009200036»,«MAX», «LIMAR» և այլն
10. Կինոսարքավորում՝ -«KN-20A»,«RK-2M»,
11.Թվային ֆոտոապարատ՝ -«SONY», «EXEL-E76», «CANON» և այլն
12. Տեսախցիկ «SONY» և այլն
13.Ռադիոընդունիչ՝-«Maxsonik», «SQNNY TCF-100» և այլն
14. Աուդիոմագնիտոֆոն՝ «PHILIPS ԱՁ-1017», «MEGATECH», «ARTECH VCD 27R», «GVC VN-301» և այլն
15. Միկրոֆոն՝ «RM-01», «IMS-9000D» և այլն:

Ծանոթագրություն. վերանորոգված ապրանքի երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 6 ամիս:

ՀԱՍՏԱՏՎԻՐԱՏՈՒ
պաշտպանության նախարարություն
Հայաստանի Հանրապետության պետական ռազմական գրանցում
Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՍՏՎԱԾ
«Սիգրամ» ՍՊԸ
«СИГРАМ»
«SIGRAM»
01541608
Տնօրեն
Վ. ԱՎԱԳՅԱՆ

Հավելված 2
N ՇՀԾՁԲ-3/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանումը	CPV կոդը՝	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	**Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ**	50531200/1/4/1	500000	500000	500000	1500000	1500000	1500000	2000000	2000000	2000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնօրեն [illegible]ՀԱՄՅԱՆ

Հավելված 3
N ՇՀՇՁԲ-3/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

“ “ “ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ե ,_____ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ,____ե ,_____ե 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ՇՀՇՁԲ-3/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N
Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————(Պատվիրատուի անունը)——————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ——————(Կատարողի անունը)——————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ——————— գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ———— – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն